10. ԹԱԳԱՎՈՐԻ ԽՈԽ ՓԵՍԵՆ

Կէղնին հովիվըմ ու կնիկըմ։ Էդ հովվի կնկան ճիժ չէղնի։ Կտեսնա օր օր մը դարվեշի մը մեկ էկավ կանավ փանշարի տակ ու կպոռա. «Ճժու դեղ ու ճժու դեղ, ո՞ր կառնե, թըղ հ՝իգա հ՝ողա»։

Կնիկ զէդ օր լսեց, զդարվեշ կանչեց, տարավ վի։ Ասեց.— Հ՝ու՞ր է ճժու դեզ, տեսնամ՝ իմա՞լ է, էդ դեղ մարդըմ օր ուտե, ե՞ր կէղնի ճիժ, տարի մը վե՞րչ, չէ հինգ-տաս տարի կընցնի։

Դարվեշն հանեց զդեղ, ցուցուց կնկան, ասեց.—Էդա է, մեկըմ օր ուտե, ինն ամիս, ինն օր, ինն սահաթ ու ինն դախեն թըմի, ճիժըմ կէղնի։ Էդ դեղի ադաթ հըմլա է. կդնիս վըր թունդրան խփան, չորնա, կվերցուս, թալիս բերանդ։

Կնիկ առավ զճժու դեզ, տվեց զդարվեշի հախն, դարվեշ թողեց գնաց։ Դարվեշ օր թողեց գնաց, կնիկն առավ զդեղ, տարավ դրեց վըր թունդրան օր չորներ։

Հովիվ սարեն էկեր էր, անոթի էր, ասեց.— Կնիկ, կնիկ, ելի լողմե մը հաց բի ուտիմ,. ելնիմ էրթամ։

Կնիկ լե լվացկ կէներ, ասաց.— Քիչըմ սապր էրե, զէդա շուր լե էնեմ, հ՝իգամ իտամ։

Հովիվ իշքեց օր խփան վրա սպիտակ դեղըմ կա, ասեց՝ «Էդա ի՞նչ է, կանի սըհիմ»։ Պըռել-պըռել վերցուց, թալեց բերան։

Աստծու ամրով ինն ամիս, ինն օր, ինն սահաթ ու ին դախեն օր թմավ, օրըմ հովիվ գացել էր դուրս կէլներ, տեսավ օր հ՝ուրնե խոխըմ փրցավ, էկավ։ Դառցավ վրեն իշքեց, վախեցավ։ Թողեց քիչըմ գնաց, մեկ լե դառցավ էկավ, ասեց. «Հալբաթ էդոր մեշ բանըմ կա, կանի տես-

նամ ինչ էր։ Վերցուց բերեց ուր հետ տուն, օր կնկան նշանց իտեղ։ Ճամբու հետ կէրթեր, կուլոնըմ խուշքի հ՝ռաստ էկավ, ասեց. «Կանի զէդա խոխ հորիմ էդա խուշքու մեջ, հ՝որի՞ն տանեմ տուն, հըմկա թըղ մնա հ՝ոդա»։ Հորեց ու թողեց գնաց։ Ինք ուրեն ասեց. «Թըղ մարդըմ զիմ խաղքութեն չտեսնա»։

Հովիվն է, հորեց, թողեց քանի մը օտք գնաց, դառցավ ետևանց իշբեց, օր ձենըմ կիգա։ Իշեց էդ խոխ։ Թռեր է, էլի խուշքուց դուրս, կպոռա ետևեն. «Աբո, հ՝ու՞ր կէրթաս դիս կթողիս հ՝ոդա, կէրթա՞ս, զիս լե տար քու հետ»։

Զուր խաղքութեն մարդըմ չիմնա, հ՝ուշիկըմ դառցավ, ետևանց վերուց, զարկեց հանթե տակն ու էկավ։ Էկավ ապառաժ տեխի մը հ՝ռաստ էկավ, բերեց հորեց հ՝ոդի ու հ՝ընցավ գնաց։ Օր հ՝ընցավ կէրթեր, մեկ լե խոխ թռավ ելավ վըր պալուն նստավ ու կպոռա. «Աբո, դո՞ր կէրթաս, զիս կթողիս հ՝ոդա, կէրթաս, զիս լե տար քու հետ»։

Ջանդարդի էղավ, տեսավ օր էդ խոխ զինք ըռազիլ կէնե, վերցուց դարկեց հանթե տակ, առավ էկավ տուն։ Օր առավ էկավ տուն, կնիկ տեսավ, ասեց.— Մարդ, էտի ի՞նչ է։

Իրիկն ասեց.— Գացի դուրս կէլնենք, հ՝իսնե էղավ, վերցրի բերի խուշքու մեջ հորեցի, պոռաց իմ ետևեն. «Աբո, դո՞ր կէրթաս, զիս լե տար քու հետ»։ Խուշքուց հանի, բերի, ապառաժ տեղըմ հորեցի, մեկ լե թռավ, Լլավ դուրս, պոռաց. «Հ՝ու՞ր կէրթաս, աբո, զիս լե տար քու հետ»։ Առա հետս էկա։ Թըղ էրթա մնա տան մեջ, տեսնանք ի՞նչ կէղնի։

Էդ խոխն էր, տան մեջ կգլորվեր, կէրթեր էն դին, կիգեր էս դին, կխոսար։

Ընցավ տարի մը. օր մը լե էդ խոխ վերուց ասեց ուր հոր.— Աբո, հար ե՞ր ես մնամ անկարգել, ելի գնա զթագավորի աղջիկն հ՝ուզե ընծիկ։

Հովիվն վերուց, ասեց.— Լաո, դու խոխըմ իս քու հալու հետ, թագավորի աղջկաց ի՞նչ կուզիս, թագավոր քզիկ իսկի աղջիկ կի՞տա։

Խոխն ասեց.— Ջանըմ, դու գնա հ՝ուզե, ի՞նչ կուզիս, խոխըմ կէղնիմ չէղնիմ, քզիկ ի՞նչ, քզիկ կասեմ՝ գնա հ՝ուզե։

Հովիվ ջանդարդի կէղնի, կէլնի կառնե զուր փետն ու կիտա զճամբախ հ՝առեջ։ Կէրթա, զթագավորի դուռ կզարկե։ Կէլնի վի, կմտնի թագավորի դիվան, կկանի։

Թագավոր կտեսնա, օր մարդըմ կա մոմզրվուկ պատընվեր, կասե.— Դու ի՞նչ կուզիս։

Հովիվ կասե.— Էկեր իմ զքու աղջիկ կուզիմ իմ խոխին։

Թագավոր կասե.—Քու խոխ ի՞նչ է, իսա՞ն է, ջանա՞վար է, ի՞նչ է։

Հովիվն կասե.— Խոխըմ է, մարդու խոխ, կէրթա, կիգա, կզրուցե։

Թագավորն մտածեց. «Խո՞խըմ ու հըմլա հունարով, կէրևա էդոր մեջ

բանըմ կա։ Վերուց ասեց հովվին.— Ես զիմ ախչիկ կիտամ քու տղին, մինակ իրեք ասելիք ունեմ, թե որ գլուխ հանե՝ կիտամ։

Հովիվն ասեց թագավորին.— Քու ասելիքն ի՞նչ է, դու լե ասե, ես կէրթամ իմ Խոխին կասեմ։

Էդ թագավորն է, հրմա՞լ քեռշկ ու սարայի մը ուներ, օր աշխարկի մեջ իսկ չէր էղի, մինակ մեկ այիպըմ կէր՝ սարայու դեմ մեծ սարըմ կեր, չթողեր արև առներ թագավորի սարայու մեջ, հրմալ օր, լուս չտեսնեն օրն ի բուն։

Թագավորն ասեց հովվին.— Կտեսնաս զէդա իմ սարայու դիմու սար, օր հով կէնե, չթողե արև առնե իմ քեռշկ ու սարայու մեջ։ Հ՝առջի ասելիքն էդ է, որ քու Խոխ զէդա սարն օր դուրե, էնէ դուրան, զիմ ախչիկ կիտամ։

Հովիվ ինքն ուր տեղ հերսոտավ. «Ջանըմ, ի՞նչ անխելք է իմ Խոխ, թագավոր տես ինչ կասե, էդի իմալ զէդի կէնիր»։

Ելավ դառցավ էկավ տուն։ Օր դառցավ էկավ տուն, Խոխն ասեց.— Աբո, հ՝ու՞ զեցիր։

Հովիվն հերսոտավ, ասաց.— Ի՞նչ հ՝ուզել է, ի՞նչ հալ է, լաո, չա՞սի քզիկ զիս մը ճամբի։ Թագավոր կասե. «Իմ քեռշկ ու սարայու դեմ սարըմ կա, չթողե արև առնե իմ քեռշկի մեջ, օր քու Խոխ դուրե զէդ սար, կիտամ զիմ ախչիկ»։ Էդոր հ՝ապով իմ հերսոտի, լաո, զէդի ե՞ր կէնիս։

Խոխն ասեց.— Արո, է՞դ բանի համար է, հեչ մարախ մ՝էնի, դու քնի, լուսուն էլի տես, կդուրեմ, չէ չըմ դուրի։

Մութն օր տվեց, Խոխն ասեց ուր հոր.— Ելի զէդա փեդատ ու թիակ տար դիր վըր էդ սարուն ու դառցի էկո։

Հովիվն ելավ առավ զփեդատ ու թիակ, տարավ դրեց սարու գլուխն ու թորկեց էկավ։

Սապախտան թագավոր ելավ քնուց, գաչքեր բացեց-չբացեց, տեսավ օր արև զարկեր է ուր հ՝օդի մեջ, շաշ էղավ, մնաց։ Ասեց.—Ջանըմ, էդի ինչ էղավ, մըր քեռշկի դեմ սարըմ կեր, չթողեր արև առներ մըր տներու վրեն, էդ իմա՞լ էղավ էդ սար, գուրավ, չէ՞ղնի հովիվի Խոխն է դուրի։

Ելավ փանջարից, իշքեց տեսավ՝ ի՞նչ սար, ի՞նչ հալպաթ, դուրան դաշտ մ՝է էղի ուր քեռշկ ու սարայու հ՝առջև։ Ասեց կնկան.—Դի՞նաս, Խոխ զախչիկ տարավ։

Խոխ օր եկավ քնուց, հորն ասեց.— Ելի, գնա տես թագավորի տան հ՝առջևու սար իմա՞լ էղավ ու դառցի էկո։

Հովիվ ելավ, վազեց էկավ, ի՞նչ տեսնա աղեկ է, տեսավ, օր դուրան դաշտըմ էղի սարու տեղ. դառցավ էկավ Խոխին ասեց.—Սար չկա, դուրեր է։

Հովիվն օր էկավ ասեց. սար դուրերե, Խոխն վերուց ասեց.— Դը զքզիկ հազրե, օր հ՝իրկուն ելնիս, էրթաս զթագավորի ախչիկ հ՝ուզես։

Հ՝իրկուն օր էղավ, հովիվն ելավ, առավ զուր փեստ ու քշեց դեմ թագավորի դիվան։ Գնաց օր ելավ թագավորի դիվան, բարև տվեց, կանավ։ Ասաց.— Թագավոր ապրած, զքու ասածն իմ խոխ կատարեց, ի՞նչ կասիս, զախչիկ կիտա՞ս տանիմ։

Թագավորն ասեց.— Ջա՞տի իրեք բան կատեմ, օր էրեց կիտամ զախչիկ, առ ու գնա։ Ես դրա մեկն իմ ասի, էրկուս լե կմնան։ Գնա ասե քու խոխին, իմ ախչկան հրմալ ձեռքըմ հալավ կտրե, օր նը թարզու ձեռք քեսած էղնի հ՝ինք, նը չաքուճ, նը մկրատ։

Մեկ լե հովիվ զձեռք դրեց ծոցք, ելավ էկավ։ Խոխն հարցուց, ասեց.— Աբո, իմա՞լ էղավ։

Հերն վերցուց ասեց.— Շանորդի բուտալա ծուռ, ես չասի՞ քզիկ՝ դու թագավորի ախչկաց լախսս չունիս, դու խոխըմ իս, քու հալու հետ։

Խոխն ասեց.— Ջանըմ, մեկ լե ի՞նչ է էղի, հրմալա կբզբզնոտիս։

Հովիվն ասեց.— Էլ ինչ էղնի, կասե. «Հրմալ ձեռքըմ հալավ կբերես իմ ախչկան, օր նը թարզու ձեռք առնե հ՝ինք, նը մկրատ, նը չաքուճ»։ Դու հ՝ու՞ստեն պիտի բերես։

— Ջանըմ,— ասեց,—է՞դ է, էղի հոգ մ՝ էնի, ես հ՝իրկուն իմալ օր քզիկ սորվըցուցի, գնա էրե, հանդե կառնիս, կիգաս։

Հ՝իրկուն օր էղավ, Խոխն ասեց հովվուն.—Ելի առ պարկըմ կորեկ, գնա էդա սարու գլուխ, ցրփնե ու ասե խազերուն՝ մեկ-մեկ կերեք, մեկ-մեկ թեփուր թողեք։ Հանդե էնդոնք մեկ-մեկ կուտեն ու մեկ-մեկ թեփուր կթողեն, կէրթան։

Խոխի ասածի պես էրեց հովիվ։ Ելավ առավ պարկըմ կորեկ ու գնաց սարու գլուխ, կանավ ու ցրփնեց։ Տեսավ օր խազեր էկան։ Օր էկան, վերուց խազերուն ասեց.— Մեկ-մեկ կերեք ու մեկ-մեկ թեփուր թողեք ու գացեք։

Խազերն է, մեկ-մեկ կերան, մեկ-մեկ թեփուր թողին ու ելան գացին։ Հովիվն է. խազեր օր թողին գացին, ժողվեց զթեփուրներ, լցեց տոպրակի մեջ ու առավ էկավ տուն։

Լցեց զթեփուրներ, օր առավ էկավ, Խոխ ասեց.— Բե՞րիր։

Հովիվն ասեց.— Հա, բերի։

Ասեց.— Հրմալ է, զբերան մը բանա, առ ու դեմ գնա թագավորին։

Հովիվն օր առավ գնաց, թագավոր ասեց.— Բերի՞ր։

Հովիվ ասեց.— Հա։

Ու զտոպրակ դրեց հ՝առեջ։

Օր դրեց, վերուց բացեց, տեսավ՝ օղորդ, ուր ասածն է։ Անուն չկրացավ օր դներ։ Ասեց թագավոր.— Իմ էրկու թաքլիֆաթն էղավ, մնաց մեկ թաքլիֆաթս, օր զէն լե էնե քու խոխ, կիտամ զախչիկ, առնես էրթաս։ Էն թաքլիֆաթն էդա է, օր իմ դռնեն հար քու դուռ չուխա պիտի

փոխս ճամբու վրեն, էրկու դին պետք է էմշի ծառ էղնի, հրմալ, օր արև չընցնի մեջեն, հ՚ըմեն թուղու մեվից պետք է էղնի էդ ծառերու մեջ, օր իմ ախչիկ հ՚ընցնի, տեսնա։ Մեկ լե իմ քեռշկ ու սարայու պես քեռշկ ու սարայի մը կշինես։ Կիգաս կառնիս զախչիկ, կէրթաս։

Հովիվ մեկ լե զմատեն թթվեցուց, զձեռք դրեց ծոցք ու դառցավ էկավ, Խոխին ասեց. թագավոր հմլա կասե։ Կասե. «Իմ դռնեն չուրի քու դուռ չուխա կփոխս, էրկու դին պետք է ծառ էղնի ու հ՚ըմեն պտուղներուց գտնվելու է մեջ, օր իմ ախչիկ հ՚ընցնի, արև չառնե վրեն ու տեսնա զէդ մեվեք ուրախնա, իմ տներու պես տունըմ կշինես, կիգաս կառնես զախչիկ, կէրթաս»։

Տղեն ասեց.— Էդո՞ր վրեն իս զքու նըյաթ կախի, վաղ էդ լե կէղնի։

Հ՚իրկուն օր էղավ, տղեն ասաց.— Ելի, առ կողով մը դավի թրեկ, գնա, պարզե մեր դռնեն հար թագավորի դուռ, ու կողով մը լե օչխրի պարտուկ ըի, թափե բոլոր, թող արի, պառկի քնի։

Խոխի ասածի պես հովիվն ելավ գնաց, առավ կողով մը դավի թրեկ, տարավ պարզեց հար թագավորի դուռ, ու կողով մը օչխրի պտրտուկ ցանեց բոլոր, էկավ, պառկավ քնավ։

Օր պառկան քնան, թագավոր ելավ լուսուն, տեսավ օր հովվի դռնեն չուրի թագավորի դուռ չուխա փռուկ է, էրկու կեչալրկ էլ ծառ՝ ինչ թուղու մեվա ասես, կա մեջ, հովվի տներու տեղ լե խաթրմ տուն կանի օր, թագավորի քեռշկ ու սարեն լե հրմալ չէ։

Խոխն ասեց.— Դը ելի գնա թագավորի մոտ, տես ինչ կասե։

Հովիվն ելավ, դեմ քշեց թագավորի դիվան։ Թագավոր օր տեսավ հովվին էկեր է, ասեց.—Էկա՞ր։

Հովիվն ասեց.— Հա։

Ասեց.—Առ զքու հարս ու գնա։

Հովիվն առավ զուր հարս, էկավ յոթն օր հարսնիկ էրին, փրցան ազատան։ Օր բերին զԽոխն ու զթագավորի ախչիկ կմեկտեղեն, տեսան օր չոր խոխրմ դրուկ է տեղի մեջ։

Ախչիկն ասեց.— Ես էղնիմ թագավորի մը ախչիկ, էրթամ հ՚իգամ, Խոխի մը խեչ պառկի՞մ։ Հա, էդա հ՚իգամ, էդա էրթամ քու խեչ չըմ պառկի։ Ցամ զքու հունարն կցուցուս, յամ քզիկ կնկութեն չըմ էնի։

Խոխն ասեց.— Ջանըմ, ծուութեն մ՚էնի, էկո պառկի, քանի մը օր. մոֆուլ տուր, ես զիմ հունար կցուցում քզիկ։

Ինչ օր էրեց, ախչիկն ասեց.— Չէ, հեղրմ ասեր իմ՝ չըմ հ՚իգա, չըմ հ՚իգա, հ՚արի դու զքու մարդկութեն չցուցուս։

Իրեք-չորս օր թագավորի ախչիկ չպառկավ Խոխի խեչ։ Խոխն օր տեսավ ախչիկ ուր մոտ չի գա պառկի, ասեց.— Ես էսօր իմ մամու հետ կկռվեմ, կասեմ. «Դու հ՚որի՞ն խրատ չիտաս քու հարսին, հ՚իգա պառ-

կի իմ մոտ»։ Դու հերսոտի, գանկով մը զարկ վրը իմ խոխեն, ասե. «Թե օր քու խոխ տղամարդ է, թըղ ելնի դուրս, էրթամ պառկիմ»։ Հանդե ես կելնիմ դուրս։

Օլոր օր լուսուն օր ելան, խոխ պըյեզըմ սազեց մոր հետ.— Հ՝որի՞ քու հարսին խրատ չի տաս, հ՝իգա պառկի մըտ հ՝իս։

Հարսն է, գնաց էկավ ու գանկով մը հ՝իջուց վրը խոխին։ Ասեց.— Օր քու խոխ մարդ է, թըղ ելնի դուրս, էրթամ պառկիմ, թը չէ՝ հ՝ո՞րի կէրթամ պառկիմ, մարդ խոխի խեշ կպառկի՞։

Ջդանակն օր զարկեց, մեկ լե տեսավ խորոտիկ, շեկ ծամերով տղե մը դուրս ելավ խոխի մեջեն։

Հերն ու մեր տեսան օր, ուրանց խոխ տղե մը էղի, ձեն տարան թագավորին, թե՝ քու խոխ փեսեն տղե մ՝ էղի։ Նոր ճամբեց թագավոր տարավ զփեսեն, իշկեց, թազատան յոթն օր հարսնիկ բռնեցին։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։

Թագավոր հալվորցեր էր, հ՝ընկավ մեռավ, տղա զավակ չունեն. բերին զխոխ դրին ուրանց թագավոր։

Երկնքեն հ՝իջավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե անկաճ էնողին։